ԵՊԿ երախտավորների՝ Արաքսի Սարյան

ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳԻ
ԲՈՒԴԱՂՅԱՆ

Արվեստագիտության թեկնածու, պրոֆեսոր,
Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի
երաժշտության պատմության ամբիոնի խորհրդական
Email: armenbudaghyan@gmail.com
Doi. 10.58580/18290019-2023.1.64-101

«Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի
երաշխավորությամբ՝ Գոհար Կառլենի Շագոյանի՝ 2.5.2023 թ.,
ընդունվել է տպագրության՝ 14.5.2023 թ.,
ներկայացրել է հեղինակը՝ 20.4.2023 թ.

Պրոֆեսոր Արմեն Բուդաղյանի ելույթից՝ Արաքսի Սարյանի 85-ամյակին նվիրված հուշ երեկոյին, 2022 թվականի սեպտեմբերի 17-ին Մարտիրոս Սարյանի տուն-թանգարանում:
From Professor Armen Budaghyan's speech at the commemorative evening dedicated to Araksi Saryan 85th anniversary of on September 17, 2022, at the house-museum of Martiros Saryan.

ՊՈԼԻՖՈՆԻԿ ՀԱԳԵՑԱԾ ԿՅԱՆՔ

Ամփոփում

Հոդվածագիրը հետաքրքիր պոլիֆոնիկ անցումներով՝ խոսքը շերտավորելով ներկայացնում է Հայաստանում և Սփյուռքում լայն ճանաչում ունեցող, լավագույն երաժշտագետներից մեկի Արաքսի Սարյանի բազմաշերտ գործունեությունը: Եվ զուգահեռաբար ներկայացնում է՝ մենք որպես թեզ առաջարկում ենք պոլիֆոնիկ թեմա 1. Մարտիրոս Սարյանի տուն թանգարանում տան տիրոջ դերով, թեմա 2. Ղազարոս Սարյան՝ ամուսին-ԵՊԿ ռեկտոր-կոմպոզիտոր, թեմա 3. ԵՊԿ երաժշտության պատմության ամբիոն, թեմա 4. ՀՀ ռադիոհեռուստատեսությունում երաժշտական խմբագիր, թեմա 5. «Հայկական հնգյակ», թեմա 6. հայ տան տիկին՝ հիանալի տնային տնտեսուհի, թեմա 7. հասարակական գործիչ: Կոդան՝ ԵՊԿ 26 երջանիկ տարիները:

Բանալի-բառեր. *Արաքսի Սարյան, ԵՊԿ, երաժշտագետ, կոմպոզիտոր, կրթություն, Ղազարոս Սարյան, Մարտիրոս Սարյան, ռեկտոր, երաժշտության պատմություն, հասարարական գործիչ:*

Abstract

PhD [Arts] for Science, Professor of Yerevan State Conservatory after Komitas, Honored Art Worker of RA ***Armen Gevork Budaghyan. - "Poliphonic saturated life"****.*

With interesting polyphonic transitions, layering the speech, the author presents the multi-layered activity of Araksi Sarian, one of the best musicologists, widely known in Armenia and the Diaspora. And in parallel, the paper offers a polyphonic theme as a thesis - topic 1: Martiros Saryan as the owner of the house in his house museum, topic 2: Ghazaros Saryan as husband and YSC Rector-composer, topic 3: YSC Department of Music History, topic 4: Music editor at RA Radio and Television, topic 5. "Armenian Quintet", topic 6: Armenian Hostess, an perfect housewife, topic 7: Public figure. 26 happy years at YSC.

Key Words: *Araksi Saryan, YSC, musicologist, composer, education, Ghazaros Saryan, Martiros Saryan, rector,music history of, public figure.*

Абстракт

Kandudam искусствоведения, профессор Ереванской государственной консерватории им. Комита-са, советник кафедры истории музыки ***Армен Георгиевич Будагян. -*** *"Жизнь, полная полифонии".*

Автор в интересной полифонический манере представляет многоплановую деятельность Аракси Сарьян - одной из лучших музыковедов, широко известной в Армении и Диаспоре. Б качестве тезисов предлагаются полифонические темы: 1. Б роли хозяйки Дома-музея Мартироса Сарьяна; тема 2. Муж, Газарос Сарьян - композитор-ректор ЕГК; тема 3. Кафедра истории музыки ЕГК; тема 4. Музыкальный редактор Радио и Телевидения РА; тема 5. "Армянская пятерка тема 6. Женщина армянского дома, отличная хозяйка; тема 7. Общественный деятель. Кода - 26 счастливых лет.

Ключевые слова. *Аракси Сарьян, ЕГК, музыковед, композитор, педагог, Газарос Сарьян, Мартирос Сарьян, ректор, история музыки, просветитель.*

Արաքսի Սարյանն ուներ պոլիֆոնիկ հագեցած կյանք: Նրա կյանքի մի կողմը կապված էր այս շենքի՝ Մարտիրոս Սարյանի տան հետ, որտեղ նա հանդես էր գալիս տան տիկնոջ գործունեությամբ: Իսկ դա կնշանակեր, որ ցանկացած րոպե, առանց նախազգուշացնելու, Մարտիրոս Սարյանին կարող էր այցելել որևէ պատվիրակություն, Հայաստանի որևէ հյուր, Կենտկոմի որևէ ներկայացուցիչ, իրեն հարմար պահի, կարող էր իր հյուրին բերել ծանոթացնելու Մարտիրոս Սարյանի հետ: Այդ ժամանակ Արաքսի Սարյանը պետք է հանդես գար որպես տան տիկին, բոլորին ընդուներ, սեղան գցեր և այլն, և այլն: Դա ամենօրյա անսպասելի այցելությունների և հյուրասիրությունների կյանքն էր:

Նրա պոլիֆոնիկ կյանքի մյուս շերտը, Ղազարոս Սարյանի հետ համատեղ կյանքն էր, որով ապրում էր Արաքսի Սարյանը: Լինելով կոնսերվատորիայի ռեկտորի կին՝ նա երբեք թույլ չտվեց, և ոչ ոք չփորձեց իր հարցերը լուծել Արաքսի Սարյանի միջոցով: Կար այդպիսի պայմանավորվածություն, գուցե պաշտոնական, գուցե ինքն իրեն ենթադրվող, որ ամեն մեկն իր գործն է անում, իրար սիրում են, հարգում, բայց չխառնվելով մեկը մյուսի գործերի մեջ:

Նրա պոլիֆոնիկ կյանքի մյուս կողմը Երաժշտության պատմության մեր ամբիոնն էր, ամբիոն, որը չես կասկածում, համարվում էր կոնսերվատորիայի լավագույն ամբիոններից մեկը: Այն ղեկավարում էր երկար տարիներ Մարգարիտ Հարությունյանը, որոշ ժամանակ ղեկավարում էի ես և հպարտ էի, որ Արաքսի Սարյանի նման մի անձնավորություն իմ ամբիոնում է, իսկ հետո ես դարձա Արաքսի ամբիոնի անդամ և էլի հպարտ էի, որ Արաքսի Սարյանի ղեկավարությամբ իմ գործն եմ անում: Նա վարում էր ամբիոնի կյանքը շատ հստակ, շատ պարզ, շատ մարդկային՝ երբեք իրեն չառանձնացնելով մյուսներից, բայց գործն առաջ տանելով: Իսկ ամբիոնն ուներ այնպիսի հեղինակավոր անդամներ, ինչպիսիք էին Մարգարիտ Հարությունյանը, Գեորգի Տիգրանովը, Աննա Բարսամյանը, Իրինա Տիգրանովան և այդ անունները նշելով, այսօր մենք պետք է հիշենք, որ նրանց ղեկավարն է եղել Արաքսի Սարյանը:

Իմ տարիքի բերումով ես վկա էի մեր հայկական հեռուստատեսության առաջին քայլերին: Դա այն ժամանակ էր, երբ մեր հեռուստատեսությունը չուներ համապատասխան տեխնիկա, բոլոր մոնիտորները և այլն, ամեն ինչ նախնադարյան վիճակում էր: Ես երբեմն առիթ էի ունենում ելույթ ունենալու այնտեղ և գիտեի, թե ինչ կաշկանդող նշանակություն ունի հեռուստատեսային տեսախցիկը: Ուղղակի քեզ կորցնում ես: Դա հսկայական պատասխանատվություն է պահանջում, քո ամեն մի խոսքը հասնում է մեր ամբողջ ժողովրդին: Արաքսի Սարյանն այստեղ միանգամից իրեն դրսևորեց այնպես, ինչպես ձուկը ջրում: Շատ հանգիստ, արտիստական կեցվածքով, առանց որևէ ավելորդությունների, արտահայտում էր իր խոսքը: Իսկ այդ խոսքը պարզ խոսք չէր, որովհետև իրեն հանձնարարում էին ամենապատասխանատու ելույթները: Ես չգիտեմ՝ որտեղից այդքան գիտելիք ուներ նա: Այստեղ տեղին է հիշել Սայաթ-Նովայի խոսքերը. «Դուն էն գլխեն իմաստուն իս»: Մեկի հոբելյանն էր վարում Արաքսի Սարյանը, մեկի՝ ծննդյան օրը:

Նրա պոլիֆոնիկ կյանքի մի մասն էլ կապված է եղել «Հայկական հնգյակի» հետ, որի կազմում էին Ղազարոս Սարյանը, Առնո Բաբաջանյանը, Էդվարդ Միրզոյանը, Ադամ Խուդոյանը, Ալեքսանդր Հարությունյանը: Դա էլ մի կյանք էր՝ շատ հետաքրքիր պահերով, որի մեջ ապրում էր Արաքսի Սարյանը:

Հիշում եմ, թե ինչպես մենք ծանոթացանք նրա հետ: Իհարկե, մինչ այդ հեռվից բարևում էինք, համարյա մի տարիքի էինք, մի տարով ինձանից ավելի երիտասարդ էր նա: Դա Գրականության և արվեստի թանգարանում էր, որտեղ նա, ընդհանուր սրահի դաշնամուրի մոտ նստած, որտեղ խստիվ արգելվում էր որևէ աղմուկ կամ նվագ, նա նվագում էր Եկմալյանի «Պատարագը»: Մենք էլ ձայն չէինք հանում՝ գիտակցելով, որ այդ բանը պետք է: Մոտեցա, հարցրեցի՝ «Ի՞նչ ես անում»: Պատասխանեց. «Աթայանը ինձ տվեց ամբողջ մի ցուցակ՝ երաժշտական գրականության, նոտային և այլն, այդ թվում՝ Եկմալյանի «Պատարագը», հիմա նստած ուսումնասիրում եմ»: Այդպես ծանոթացանք, և այդպես սկսվեց մեր մտերմությունը:

Արաքսի Սարյանի պոլիֆոնիկ կյանքի մի կողմը նրա կենցաղն էր: Նա խոստովանում էր, որ առավոտվա ութն անց կեսի նախաճաշը նա հասցնում էր անել երեկոյան ժամը ութն անց կեսին: Տարբեր առիթներով գալով այս տուն, ես տեսել եմ, թե ինչպես նույն սենյակում, սրահում լվացքն էր արվում՝ դա Արաքսի Սարյանն է, ճաշ էր եփվում, դա միաժամանակ Արաքսի Սարյանն էր, մշտապես թուղթ և գրիչ էր սեղանի վրա՝ նա գրում էր շտապ մի հոդված, որովհետև էդպես էր ընդունված երեկոյան համերգ էր, առավոտյան պիտի հոդվածը հասցներ խմբագրություն, միաժամանակ խոսում էր հեռախոսով, միաժամանակ, եթե հնարավորություն կար, ինչ-որ բան էր ծամում... Միշտ հետը հեռախոսով խոսելիս զգում էիր, որ բերանում ինչ-որ մի բան կա, որովհետև այսպես թե այնպես մի բան պիտի ուտեր, որ սնվեր:

Ապշելու էր այդ օպերատիվությունը, քաջատեղյակությունը հանրապետության կյանքին, նրա ունակությունը՝ միաժամանակ լինել հարյուր տեղ... Նա մի յուրատեսակ «Ֆիգարո» էր, որը հասնում էր օգնության բոլորին: Այսպիսին էր Արաքսի Սարյանը:

Եվ, վերջապես, պոլիֆոնիկ այդ բազմաշերտության մեջ, նա հրաշալի ընտանիքի մայր էր, որը դաստիարակեց իր դուստրերին՝ Լուսիկին և Սոֆիկին:

Մի առանձնահատկությունն էլ գյումրեցի գեներն էին, իսկական գյումրեցի էր: Ես հորը չէի ճանաչում, բայց մորը շատ լավ գիտեի, ծանոթացել էի: Ինչքան բան էր նա ժառանգել ծնողներից, ինչքան բան Մարտիրոս Սերգեևիչից, ինչքան բան Լազար Մարտիրոսովիչից:

26 տարի Ղազարոս Սարյանը ղեկավարել է կոնսերվատորիան, և ես ամենայն պատասխանատվությամբ կարող եմ ասել, հարգելով մեր մնացած ռեկտորներին, որ այդ 26 տարիները կոնսերվատորիայի կյանքում ամենաերջանիկ տարիներն էին, որովհետև ամեն ինչ արդարացի էր, ամեն ինչ բարձր պատասխանատվությամբ էր, ամեն ինչ պրոֆեսիոնալ բարձրագույն մակարդակով էր, և էդ ամենին անտեսանելիորեն ներկա էր Արաքսի Սարյանը:

ԵՊԿ երախտավորները՝ Արաքսի Սարյան

Հեղինակի մասին. *ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳԻ ԲՈՒԴԱՂՅԱՆ (ծ. 5.11.1936 թ., ք. Երևան): Արվեստագիտության թեկնածու (1970 թ.) ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ (2008 թ.), պրոֆեսոր (1989 թ.): Ավարտել է՝ ԵՊԿ ջութակի (1960 թ., Հ. Բոգդանյանի դասարան), երաժշտագիտական (1963 թ., պրոֆ. Գ Գ. Տիգրանովի դասարան) բաժինները, Լենինգրադի կոնսերվատորիայի ասպիրանտուրան (1967 թ., ղեկ.՝ Գ. Գ. Տիգրանով): Դասավանդում է՝1967-ից ԵՊԿ երաժշտության պատմության ամբիոնում, վարիչ 1978-1982 թթ., նաև 1994-ից՝ ԵԹԿՊԻ-ում: 1963-ից՝ Հայֆիլհարմոնիայի և Հայաստանի Ֆիլհարմոնիայի նվագախմբի խմբագիր և դասախոս: Հեղինակ է՝«Ջութակի սոնատը հայ երաժշտության մեջ» (1984 թ.), «Հրաչյա Բոգդանյան» (1994 թ.), «Ալեքսանդր Չաուշյան» (1995 թ. 3-էլ հայ. լեզվով), «Կարպ Սավելի Դոմբաև» (1996 թ.), «Ջութակահար Հակոբ Վարդանյան» (1998 թ.), «Ավետ Գաբրիելյանն ուղու սկզբում» (1999 թ.), «Վահե Ահարոնյան» (2001 թ.), «Վիլլի Մոկացյան» (2002 թ.), «Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի-85 2023-2008 թթ.» (2008 թ.), «Դմիտրի Նիկոլայի Լեկգեր» (2012 թ.), «Զավեն Վարդանյան» (2013 թ.), «Զարեհ Սարգսյան» (2014 թ.), «Կոնստանտին Մելիք-Վրթանեսյան» (2016 թ.), «Աննա Մնացականյան» (2017 թ.), համահեղինակ՝«Վիլհելմ Շպերլինգ» (բոլորը ռուս. լեզվով, 2016 թ.):*

Об авторе: *АРМЕН ГЕОРГИЕВИЧ БУДАГЯН (род. 5.11.1936, Ереван). Кандидат, искусствоведения (1970), заслуженный деятель искусств РА (2008), профессор (1989). Окончил: ЕГК по классу скрипки, класс Г. Богданяна (1960), отделение музыковедения, класс проф. Г. Г. Тигранова (19630 , аспирантуру Ленинградской консерватории, руководитель Г. Г. Тигранов (1967). Преподавал: с 1967 года на кафедре истории музыки ЕГК (с 1967),зав.кафедрой (1978-1982), в Институте театра и кино (с1994). Редактор и лектор Армянской филармонии и Филармонического оркестра Армении (с 1963). Автор книг: «Скрипичные сонаты в армянской музыке» (1984); «Грачья Богданян» (1994); «Александр Чаушян» (1995, на армянском языке); «Карп Савельевич Домбаев» (1996); «Скрипач Акоп Варданян» (1998), «Авет Габриэлян в начале пути» (1999)); «Завен Варданян» (2013), «Заре Саркисян» (2014), «Константин Мелик-Вртанесян» (2016); «Анна Мнацаканян» (2017); соавтор «Вильгельм Шперлинг» (все на русск., 2016).*

About the author: *ARMEN GEVORG BUDAGHYAN (b. 5.11.1936, Yerevan) - PhD in Arts (1970), Honored Artist of RA (2008), Professor (1989). He graduated from the violin (1960, class of H. Bogdanyan) and musicology (in 1963, class of Prof. G. G. Tigranov) departments of YSC, completed a postgraduate course at Leningrad Conservatory (1967, supervisor: G. G. Tigranov). He worked at the Department of Music History of YSC, first as a teacher (since 1967), then as head of the department (1978-1982), and at Yerevan State Institute of Theatre and Cinematography (since 1994), he worked as an editor and lecturer of the Armenian Philharmonic and the Philharmonic Orchestra of Armenia (since 1963). He is author of a number of works in Armenian, including "Violin Sonata in Armenian Music" (1984), "Hrachya Bogdanyan" (1994), "Alexander Chaushyan" (1995), and in Russian: "Karp Savel Dombayev" (1996), "Violinist Hakob Vardanyan" (1998), "Avet Gabrielyan at the beginning of the creative path" (1999), "Vahe Aharonyan" (2001), "Willy Mokatsyan" (2002), "Yerevan Komitas State Conservatory-85" (2008), "Dmitry Nikolay Lekger" (2012), "Zaven Vardanyan" (2013), "Zareh Sargsyan" (2014), "Konstantin Melik-Vrtanesyan" (2016), "Anna Mnatsakanyan" (2017), and co-author of the work "Wilhelm Sperling" (2016), also in Russian.*